



ԵՎՐԱՍԻԱ
ՀԱՍԱԳՐԵԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄ



Հայաստան

Երիտասարդական բանկ

Ծրագրի նպատակը՝ ապահովել երիտասարդների ակտիվ մասնակցությունը երկրի գյուղական համայնքների զարգացման գործում:

Երիտասարդների ավելի քան մեկ երրորդն ապրում է գյուղական համայնքներում: ՏՄ մշակույթի նախարարության կողմից անցկացված հեղափոխության համաձայն, գյուղական համայնքներում բնակվող երիտասարդների հիմնախնդիրներն են մասնագիտական կրթություն ստանալը և զբաղվածությունը, ինչպես նաև մշակութային միջոցառումների բացակայությունը: Մոցիալ-փնտրեսական դժվարությունները խոչընդոտում են երիտասարդների ակտիվ մասնակցությունը գյուղական համայնքների զարգացման գործում: Գյուղական համայնքների երիտասարդների գործնական հմտությունները և համայնքների զարգացման գործում ղեկավար դերեր ստանձնելու կարողությունները զարգացնելու նպատակով Եվրասիա համագործակցություն հիմնադրամը Նյուսիսային Իռլանդիայի համայնքային հիմնադրամի (CFNI) հետ համապետ իրականացնում է «Երիտասարդական բանկ ծրագիրը: Ծրագրով նախատեսվում է զարգացնել երիտասարդների մտք առաջնորդության, որոշումներ կայացնելու և վերլուծական մրաձեռակերպի հմտություններ՝ ի շահ համայնքի խնդիրների լուծման:

Կարողությունների զարգացում

2007 թ. հունիս ամսին Եվրասիա համագործակցություն հիմնադրամը մեկնարկեց «Երիտասարդական բանկ ծրագիրը և Նայաստանի գյուղական համայնքներում ձևավորեց հինգ երիտասարդական բանկ-կոմիտեներ: Յուրաքանչյուր կոմիտեին անդամակցում են գյուղական համայնքներում բնակվող 16-24 տարեկան 5-7 երիտասարդներ: Երիտասարդների ընտրության հարցում հաշվի առնվեցին երիտասարդների՝ թիմային և կամավորական աշխատանքի կարողությունները: Երիտասարդների ընտրությունից հետո Նյուսիսային Իռլանդիայի համայնքային հիմնադրամի մասնագետներն անցկացրեցին քառօրյա աշխատանքային հանդիպումներ՝ նվիրված երիտասարդական բանկի աշխատանքների կազմակերպմանը: Հանդիպման ավարտից հետո երիտասարդական բանկերի անդամներն անցկացրեցին համայնքի կարիքների գնահատում: Գնահատման արդյունքների հիման վրա մշակվել են դրամաշնորհային ծրագրեր՝ ուղղված երիտասարդների միջոցով համայնքի խնդիրների լուծմանը: Մրցութային կարգով ծրագրերն ընտրելուց հետո երիտասարդական բանկերն անցկացնելու են ծրագրերի մոնիթորինգ: Այս գործողությունների և լրացուցիչ այլ դասընթացների միջոցով երիտասարդական բանկերը ձեռք են բերում գործնական գիտելիքներ թափանցիկ կառավարման վերաբերյալ՝ հեղափոխում իրենց աշխատավայրերում կամ համայնքներում կիրառելու նպատակով:

Համագործակցություն

Եվրասիա համագործակցություն հիմնադրամը խթանելու է երիտասարդական բանկերի միջև համագործակցության ցանցի ստեղծումը: Այն հնարավորություն կտա իրականացնելու տեղեկատվության ու փորձի փոխանակում ծրագրի մասնակիցների միջև: Հիմնադրամը նախատեսում է ստեղծել օնլայն համակարգ՝ երիտասարդական բանկերի միջև հաղորդակցությունն ապահովելու համար: Դասընթացների միջոցով կամրայնողվի նաև ցանցի անդամների միջև կապը: Կազմակերպվի նաև համաժողով՝ նվիրված «Երիտասարդական բանկ ծրագրի աշխատանքներին: Երիտասարդության հարցերով զբաղվող այլ կազմակերպություններ կհրավիրվեն մասնակցելու ծրագրի կայուն զարգացմանն ուղղված աշխատանքներին: Ապագայում Եվրասիա համագործակցություն հիմնադրամը հնարավորություն կընձեռի Նայաստանի երիտասարդական բանկերին իրականացնելու տեղեկատվության և փորձի փոխանակման աշխատանքներ Վրաստանի, Ադրբեջանի, ինչպես նաև օտարերկրյա այլ երիտասարդական բանկերի անդամների հետ:

Եվրասիա հիմնադրամը մասնավոր կառավարվող, ոչ շահութաբեր կազմակերպություն է, որին աջակցում են ԱՄՆ կառավարությունը և այլ դոնորներ: 1992 թ-ից ի վեր Եվրասիա հիմնադրամը ներդրել է ավելի քան 370 միլիոն ԱՄՆ դոլար և իրականացրել ավելի քան 8400 դրամաշնորհային և տեխնիկական աջակցության ծրագրեր Հայաստանում, Ադրբեջանում, Բելառուսում, Վրաստանում, Ղազախստանում, Ղրղզստանի Հանրապետությունում, Մոլդովայում, Ռուսաստանում, Տաջիկստանում, Թուրքմենստանում, Ուկրաինայում և Ուզբեկստանում: Սկսած 1992 թ-ից՝ Եվրասիա հիմնադրամը Հայաստանում ներդրել է ավելի քան 30 միլիոն ԱՄՆ դոլար:

Եվրասիա համագործակցություն հիմնադրամը Եվրասիա հիմնադրամի հետնորդ կազմակերպությունն է:

Սույն հրատարակությունը ստեղծվել է Ամերիկայի ժողովրդի կրթության, երիտասարդության և շնորհիվ, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (USAID) աջակցությամբ, որի բովանդակության համար պատասխանատու է Եվրասիա համագործակցություն հիմնադրամը: Այստեղ արտահայտված տեսակետները պարտադիր չէ, որ համընկնեն ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության կամ ԱՄՆ կառավարության տեսակետներին:






ԵՎՐԱՍԻԱ
ՇԱՍԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ՇԽՆԱԴՐԱՍ

Նամայրել, ընձեռել, հզորացնել

Երիտասարդական բանկերն՝ ըստ մարզերի



- ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԱՆԴԱՄՆԵՐ
- Նունե Սարգսյան
Ինտերնյուս-Հայաստան
- Արտաշես Թերզյան
Investment Bank Trust,
National Bank Trust,
Ռուսաստան
- Մարգարիտա Փիլիպոսյան
Հայ օգնության ֆոնդ
- Դավիթ Հովհաննիսյան
Երևանի պետական
համալսարանի մշակույթի և
քաղաքակրթության կենտրոն
- Արա Համազասյան
«Իզմիրյան հիմնադրամի
երևանյան գրասենյակ
- Արսեն Դազարյան
Հայաստանի
արդյունաբերողների
և գործարարների միություն

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել՝
 Եվրասիա համագործակցություն հիմնադրամ
 Հասցե՝ 0009, ՀՀ, ք. Երևան, Զարոբյան փ. 56
 Հեռ./ֆաքս՝ (374 10) 58 60 95 / 96
 info@epfound.am, www.epfound.am